ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌԻ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔ

Հայաստանի Հանրապետության Լոռիի մարզի Տաշիր համայնք
ՀՀ Լոռիի մարզ, ք. Տաշիր, (0254) 2-22-41, tashir.lori@mta.gov.am

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ (2-րդ )

## «ՏԱՇԻՐ ԱԳՐՈ » ՓԲԸ-Ի ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԲԼԱԳՈԴԱՐՆՈՅԵ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ «ԱՆԱՍՆԱԳՈՄ N6 ԵՎ ԿԹԱՐԱՆ N2 ԿԱՌՈՒՑՄԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ» ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ (2-ՐԴ ՓՈՒԼ)

2024 թվականի նոյեմբերի 28-ին ժամը 12:30-ին ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքի Բլագոդարնոյե բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում տեղի ունեցավ «Տաշիր Ագրո» ՓԲԸ-ի կողմից ներկայացված Բլագոդարնոյե բնակավայրում «Անասնագոմ N6 և կթարան N2 կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ հանրային քննարկումը (2-րդ փուլ):

Հանրային քննարկման մասնակիցների ցանկը և հանրային լսումների լուսանկարների սկավառակը կցվում են սույն արձանագրությանը:

Հանրային քննարկումներին մասնակցում էին Տաշիր համայքնի Բլագոդարնոյե բնակավայրի վարչական ղեկավար Աշոտ Ավետիսյանը, ՀՀ շրջակա միջավայրի նախարարության ՇՄԱՓԿ մասնագետ Շ. Կարապետյանը, Տաշիրի համայնքապետարանի համապատասխան ստորաբաժանման աշխատակիցները, աշխատակազմի քարտուղարի պաշտոնակատար Ն. Սոլոյանը, ընկերության բնապահպանական խորհրդատուն և բնակավայրի բնակիչներ:

Հանրային քննարկումը վարում էր ՀՀ շրջակա միջավայրի նախարարության ՇՄԱՓԿ մասնագետ Շ. Կարապետյանը, ով նախապես նշանակված ժամին բացեց հանրային քննարկումը: Նա ընթերցեց հանրային քննարկման օրակարգը և հայտնեց, որ հանրային քննարկման մասին հայտարարությունը, համաձայն սահմանված կարգի և օրենսդրության պահանջների, հրապարակվել են Առավոտ օրաթերթում, տեղադրվել է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության պաշտոնական կայքում, փակցվել՝ Համայնքի ղեկավարի նստավայրի և ազդակիր բնակվայարի վարչկան շենքի՝ հայտարարությունների համար առանձնացված ցուցատախտակի վրա, և հավելեց, որ սահմանված ժամկետում շահագրգիռ հանրության կողմից առաջարկություններ, դիտողություններ և կարծիքներ չեն ներկայացվել: ՀՀ շրջակա միջավայրի նախարարության ՇՄԱՓԿ մասնագետ Շ. Կարապետյանը, մանրամասն ներկայացրեց հանրային քննարկման ներկայացված հարցի բովանդակությունը՝ նշելով, որ հրավիրված հանրային քննարկումը վերաբերում է

«Տաշիր Ագրո» ՓԲԸ-ի կողմից ներկայացված Բլագոդարնոյե բնակավայրում «Անասնագոմ N6 և կթարան N2 կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ հանրային քննարկման 2-րդ փուլին: Նա ներկայացրեց փորձաքննական ողջ գործընթացը, որ սահմանված կարգով ՇՄԱԳ հաշվետվությունն ուղարկվել է նախարարության ստորաբաժանումներին և այլ նախարարություններ կարծիքների, եղել են առաջարկություններ և դիտողություններ, որոնցով ՇՄԱԳ հաշվետվությունն ուղարկվել է լրամշակման և ձեռնարկողի կողմից մուտքագրվել է լրամշակված ՇՄԱԳ հաշվետվությունը, որի վերաբերյալ և տեղի է ունենում այսօրվա հանրային քննարկումը:
Ներկայացրեց նաև ՇՄԱԳ հաշվետվությունում ներառված շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչների վրա հնարավոր ազդեցությունների շրջանակները և մեղմանն ուղղված միջոցառումները:

Ելույթ ունեցավ «Տաշիր Ագրո» ՓԲԸ-ի բնապահպանական խորհրդատուն, ով ներկայացրեց «Տաշիր Ագրո» ՓԲԸ-ի կողմից ներկայացված Բլագոդարնոյե բնակավայրում «Անասնագոմ N6 և կթարան N2 կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումները, ինչպես նաև շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչների վրա հնարավոր ազդեցությունների շրջանակները և մեղմանն ուղղված միջոցառումները, ինչպես նաև նշեց, որ ընկերությունը կստեղծի բնակվայրում նոր աշխատատեղեր, կկատարի ներդրում բնակավայրի սոցիալ – տնտեսական զարգացման ոլորտում:

Ելույթ ունեցավ Տաշիր համայքնի Բլագոդարնոյե բնակավայրի վարչական ղեկավար Աշոտ Ավետիսյանը, ողջունեցին նախատեսվող գործունեությանը և նշեց, որ այն կնպաստի համայնքի, բնակավայրի սոցիալ տնտեսական զարգացմանը:

Հանրային քննարկամն ժամանակ, Բլագոդարնոյե բնակավայրի բնակիչների կողմից որևէ առաջարկություն և դիտողություն չհնչեց, բոլորը միաձայն ողջունեցին նախատեսվող գործունեությունը:

Ամփոփելով հանրային քննարկման արդյունքները՝ բնակավայրի բնակիչները, հավանություն տվեցին ներկայացված ծրագրին և ողջունեցին նախատեսվող գործունեությանը:

Քննարկումների
վարող և պատասխանատու՝

ՀՀ շրջակա միջավայրի
նախարարության ՇՄԱՓԿ մասնագետ
Շ. Կարապետյան

Ձեռնարկող՝

«Տաշիր Ագրո» ՓԲԸ-ի
տնօրենի լիազորված անձ
Ա. Բաղդասարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ * РЕСПУБЛИКА АРМЕНИЯ МАРЗ ЛОРИ ЗАКРЫТОЕ АКЦИОНЕРНОЕ ОБЩЕСТВО * REPUBLIC OF ARMENIA MARZ LORI CLOSED JOINT-STOCK COMPANY
«ՏԱՇԻՐ ԱԳՐՈ» "TASHIR AGRO" «ТАШИР АГРО»
06959854